ՔՈՒՉԱԿԵԱՆ ՔԵՐԹՈՒԱԾ ՄԸ

«Բազմավէպ»ի անցեալ թուոյն մէջ յիշատակեցի թէ Պարտիզակի մէջ գտնուած Տաղարանը Քուչակի քառեակներ ունի։ Ցէջ 42–5 Քուչակեան գոյնով ամբողջական քերթուած մ'ալ կայ որ ըստ իս կրնայ Քուչակի ընծայուիլ։ Այդ տաղը սա խորագիրն ունի «Տաղ ազնիւ սաս» և կը սկսի « Մաղիկ էն ծաղկին կ'ասեմ » և այլն. այդ տաղը որ պարզութեան հետ ունի նաև գեղեցկութիւն՝ ինծի ծանօթ թուեցաւ. և անոր ուրիշ օրինակ մը գտայ մեր Ս. Ղազարու Մատենադարանի Գ. Տաղարանին մէջ (նոտրգիր). բայց այս վերջինս զոր Բ. օրինակ կը կոչենք բաւական պակաս տողեր ունի ինչպէս որ ի ծանօթութեան կը նշանակենք։

Տ Ա Ղ (ազնիւ սաս)

Մաղիկ այն[1] ծաղկին կ'ասեմ[2] որ օձու բերնիկն[3] էր բուսեր,
Շատ մարդ[4] այն օձու ահէն զայն ծաղկի հոտըն չէր առեր.
Մանուկ մի հոռմանց տանէն զարևու թարկիկն է տըւեր
Գնացեր զօձն ի քուն գըտեր ու զծաղիկն ի բերնէն առեր.
Աղեր ու ի սարեր ելեր, սարերուն հաւասար ցրցուցեր.
— Սարե՛ր ձեր արևն ասեմ, ձեր մէջն հանց ծաղիկ ո՞վ տեսեր։
Սարերն այլ յիրար եկին ու մանկան հըւապ մի[5] տըւին.
— Մանուկ[6] քու կանանչ արևն, մեր մէջն հանց ծաղիկ չենք տեսեր
Շատ վարդ 'ւ ըռեհան տեսեր 'ւ այդոր գոյնըն չէր նըմաներ.
Զվարդըն չեմ կարնար ղահրեր որ պրլպուլն բերնովն է գովեր.
Ըռէհնին այլ ի՞նչ ասեմ որ ի փայտ խաչին է բուսեր.
Պալասանն այլ ի՞նչ ասեմ որ կենաց մարդկան է եղեր։
Այսօր ենք տեսեր ըզծաղիկդ[7], անգինի մեք եմք հարբեցեր[8].
Մանուշակին այլ ի՞նչ ասեմ[9], յեզեր առուիկան է բուսեր[10].
Վէր[11] անահուն գետերուն կամարով կարմունճ է կապեր
Շատ մարդ անցուդարձ արեր, շատ դարիպ մանուկ սիրուտէր.
Աշունքն ի պաղչան մըտեր[12], ծաղկունքն վէրքն է վերցեր,
Սարերն ամէն ձոն (ձիւն) եկեր, ծառըն գիւր տերևն ուրացեր։*

---

1. Ա. Օր. որ է Պարտիզակի Տաղարանը՝ միշտ ՀԷ ունի։ — 2. Երկու Օրինակներն ալ ՀԷ՝ իմ տառն ՀԷ՝ կը կրկնեն միշտ ամէն տողի կիսուն. ըսել է ժողովրդական երգ մը գործած էր այս գերթուածը։ — 3. Բ. Օր. բերանն ունի որ թուչակեան չէ։ — 4. Բ. մարդիկ ունի և որ վանկ մը կ'աւելցնէ։ — 5. Ա. չունի մի։ — 6. Ասկից հինգ տող չունի Բ. Օրինակը։ — 7. Բ. զայս ծաղիկս։ — 8. Բ. ունի սա յաւելուած տողը «Այսօր եմք տեսեր զայս ծաղիկս խավ ու ծուռ աշխարհս եմք եկեր»։ — 9. Բ. կ'ասեն։ — 10. Հ՞ս ունի սա տողը «Ինչան ծաղկին ինչ կ'ասեն որ ի փայտ խաչեն է բուսեր»։ — 11. Բ. չունի այս և յաջորդ տողը։ — 12. Բ. Պաչէս կը վերջացնէ «Աշունքն ի պաղչան իջեր որ ծառերն գաւերն ուրացեր». յայտնի է որ պակաս իմաստ ունի. ըստ Ա.ի ձիւնը կու գայ սարերը կը ծածկէ և ծառը իր տերևը կ'ուրանայ։

Հ. Մ. Պ.

digitised by A.R.A.R.@